

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1952 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 5-6

## ԳՐԱԿԱՆ

- Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Պատրիարքական (և ծնունդի) հարկերի մասին 97
- Հ. ՎԱՆԱՆ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ. - Հայրենի երգ - Պէյ-րուս (քերթունքներ) 110
- Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ. - Շիրվանզատե 111

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. - Վանական Միաբանության Ս. Ղազարու թանգարանին հայկական հին դրամներու հաւաքածոները 102
- ՏՈՐՔ. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ. - Ներսէս Շնորհաւի Նով-Պղեակը և Այնթապի Սոֆը 119
- ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ - Ժ. Գաբրիէլի նոր գրչագիր աւետարան 121
- Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Համերգ (շար. և վերջ) 128

## ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ

- Vahan Totomiantz. - La cooperazione in Armenia conserva tuttora le sue primitive origini 123

## ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

- S. B. - Leone Minassian espone a la Stroz-zina 126

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- ԽՄԲ. - Ֆրանսական Դերասանի Կախազհը Մուրատ-Ոստիպէրի վարժարանին մէջ 129
- » Գեղարք ընկուհի Օր. Մարիամ Շապուհեան 142
- Հ. Մ. Ճ. - Մուրատ-Ոստիպէրի վարժարանը և Ֆրանսական Կառավարութիւնը 143

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Ի. ԱՍՏՈՒԱՅԱՏՈՒՐԵԱՆ. - «Գրչանկարներ Պարտիզանի գիւղին» (հեղ. Ա. Ա. Պետիկեան, Փարիզ, 1950) 137

# SOMMAIRE

1952 Mai-Juin N. 5-6

## LITTÉRATURE

- P. M. Djanachian. - Bédros Tourian (à l'occasion du centenaire de sa naissance) 97
- P. Vahan Hovhannessian. - Chant national - Beyrout (poésie) 110
- P. Mesrop Djanachian. - Chirvanzaté 111

## PHILOLOGIE

- Berdj M. Garabédian. - Les collections des monnaies anciennes du musée de St. Lazare 102
- Dr. H. Der Ghazarian. - Le chateau «Zov» de Nersès le Gracieux et «Sof» d'Aïntab 119
- Aram Eremian. - Un nouveau manuscrit d'Evangile de XVIIe siècle 121
- P. M. Djanachian. - Symphonie (poésie), suite et fin 128

## SOCIOLOGIE

- Vahan Totomiantz. - La cooperation en Arménie conserve jusqu'aujourd'hui ses origines primitives 123

## BEAUX ARTS

- S. B. - Léon Minassian, peintre arménien, expose ses oeuvres à la Stroz-zina 126

## ECHO ARMÉNIEN

- Réd. - Le Président du Conseil de la République au Collège arménien de Venise 129
- » - Mlle Marie Chabanian, doctresse en Médecine 142
- P. M. Dj - Le Collège arménien Moorat-Raphaël de Venise et le Gouvernement Français 143

## RECENSION

- I. Asduazadourian. - «Tableaux descriptifs du village Bardizagh» (par A. A. Bédighian, ed. à Paris, 1950) 137

# ԲԱՉՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1952  
110-րդ ՏԱՐԻ



ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ  
ԹԻՒ 5-6

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(ԻՐ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

Դար մը վերջ տակաւին կ'ապրին աղեկաբար երգերը տարաբախտ բանաստեղծին՝ որուն կեանքը եղաւ տառապանքի բանաստեղծութիւն մը:

Հայ գրական հրապարակը կը տօնէ այս տարի Դուրեանին ծննդեան հարիւրամեակը, ոգեկոչելով անոր յիշատակը որ անմահութեան ծոցին մէջ դեռ կ'երգէ, եւ իր թաղծոտ նուազին արձագանքը կու գայ վերստին յուզելու մեր հոգիները՝ այնպէս թարմ եւ այնպէս կենդանի չունելով, ինչպէս արտագրուած էին անոնք տարիներ առաջ մուսլ վիշերներու առանձնութեան մէջ:

Վարդերու ամսոյն ծնած եւ ձմրան քամիին հարուածին տակ գլուխը հողին հակած այս բանաստեղծը՝ Ժամանակակիցներէն եւ իր կենդանադիրներէն կը նկարագրուի վայելչազէմ, կանացի նրբութեամբ ու զեղով, սեւաչուի եւ լայն ճակատով: Հակառակ խառնուածքով բարեհամբոյր, շնորհալի, զուարթ ըլլալուն՝ աղքատութեան եւ հիւանդութեան տառա-

պանքին տակ դարձած է յոռետես մը կեանքին հանդէպ, տխուր-գուարք մը՝ ինչպէս կը կոչէ ինքզինքը: Իր երգերուն մէջ յայտնուած հոգեկան ընդվզումի, դանդաղութի եւ ճակատագրին դէմ ոգորոզի բուռն շնորհ, ապստամբ ոգի մը ցոյց կու տան իր մէջ, սակայն ատոնք բնական ճիշտն են բխած սրտէ մը՝ որ կը տառապի կեանքի, սիրոյ եւ մահուան ահաւոր պայքարով: Հոգւոյն խորը Դուրեան բարեպաշտ հաւատացեալ մըն է Աստուծոյ եւ հանդերձեալ կեանքին, որուն ապացոյցը տուած է ընդունելով Եկեղեցւոյ սուրբ խորհուրդները մեռնելէն առաջ: Ինք է որ դրած է սա խոստովանութիւնը իր նամակներէն մէկուն մէջ. «Մահուան սպանդ մ'եմ, կ'երթամ առաջի կտրչի, կը հաւատամ Աստուծոյ, կը հաւատամ այն հանդերձեալ Ապրանքին. ով որ կը հաւատայ երջանիկ է: Աշխարհի մէջ միայն անհաւատն ապերջանիկ, յուսահատ եւ թշուառ է: Թերեւս բարեկամք կամ ընթերցողք զիս միտիքական կամ այլաբանական գտնեն

ԲԱՉՄԱՎԵՊ

տողերու մէջ. արդէն ես ալ այլաբանութիւն մ'եմ, խորհուրդ մ'եմ: Գիտեմ, քիչ ատենէն պիտի մեռնիմ. արցունքի տեղ՝ դադաղիս վրայ երկու խօսք, հառաչանքի տեղ՝ երկու շունչ աղօթք հոգւոյս համար»... (Նամակ, 1871, Դեկտեմբ. 10): Իր Տրտունջքը հետեւաբար նկատելու է արդիւնք վայրկենական անդուստ պոռթկումի մը, իրեն երգը իր յոյսերու եւ սէրերու խորտակումին, նման փշուրած ալիքներու բնական կոծին ու շառաչին: Այդ քերթուածին ամէնէն բուն շեշտն անգամ պայմանական է՝ կապուած եթէ-ով. կը հաւատայ եւ յոյսն ունի որ իրեն պահուած է «կեանք մը անհուն շողի, բոյրի, աղօթքի»: Տրտունջքին յաջորդող Զղջումը, ուր այդ քերթուածը կ'անուանուի «սեւ հեղեղ» մը, դուրս թափուած ի տես մահամերձի իր սնարին վերեւ հսկող եւ արտասուող մօր մը ահաւոր ցաւին, կ'արգարացնէ ամէն բան:

Դուրեան հայրենասէր մ'ալ էր, ինչպէս կը յայտնուի իր քանի մը երգերէն, այնքան որ իր միակ ցաւը կը համարէր մեռնիլ աննշան՝ չօգնած իր թշուառ հայրենիքին «իմ ցաւը»: Անհուն սէր մը ունէր նաեւ զեղարուեստի, զբաղանութեան եւ մանաւանդ բանաստեղծութեան համար. «Ես աշխարհի մէջ, կ'ըսէ ան, միայն երգերը շատ սիրեցի, կ'ուզեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլայ...: Ով որ երգ չունի կամ երգել չի գիտեր՝ ներդաշնակութեան, զեղեցիկն ու սիրունին խոնարհանը չօգտակուլ քաղցրութիւնը չունի: Մարդուն էն առաջին ծայրը երգն է, բընութիւնն ամբողջ երգ մ'է... երիտասարդը ըլլալ եւ երգել, ծերը ըլլալ եւ աղօթել: այս է կեանքը». (տե՛ս Նամակը, 1871 Դեկտ. 10): Ահա Դուրեանը իր հաւատքին ու դադապարականին մէջ:

Պետրոս Դուրեանի զբաղան գործունէութիւնը հինգ կարճ տարիներու (1867 - 1871) արդիւնք է, եւ այդ ժամանակին արդիւնք է, եւ այդ ժամանակին արդիւնք է:

մեծ մասն ալ սպառած արդէն թատերական անարժէք արտադրութիւններով, որոնք աւելի պատճառ եղան վատնելու իր ոյժերը եւ հեռացնելու զինքը բանաստեղծութենէն՝ որուն համար ստեղծուած էր ան: Իր գրական գործը կը կայանայ հետեւաբար 40 կտոր (տարբերակներով միասին) Գնաբերգութիւններու, 11 Ողբերգութիւններու ( որոնց մասին պիտի խօսինք աւելի ուշ ) եւ 13 Նամակներու մէջ, որոնք արձակ բանաստեղծութիւններու շնորհն ունին, եւ որոնց մէջ կը ցոյայ տարախոս քերթողին ցաւատանջ կեանքին պատկերը, զգացումի անկեղծ շեշտով եւ զբաղան սիրուն փոխաբերութիւններով. ասոնք իր չերգուած երգերն են, այնքան զբաղիչ ու սրտազեղ հոգիով մը գրուած: Կորսուած են իր մէկ քանի ձեռագիր թատրոնները, ինչպէս քանի մը ուրիշ քնարերգութիւններու սեւագրութեանց թղթթեղներ, որոնց վրայ սովորութիւն ունէր գրողները իր ներշնչումները. կորսուած է նաեւ Վոսիտրի գիշերներ ինքնազգրական վէպը, որուն մասին կը խօսին իր կենսագիրները, թերեւս զո՛հ դաժամ բոլորն ալ 1873 Յունիս 21-ի հրդեհին՝ որ մոխիրի վերածեց իր հայրենի տունը:

Դուրեանի քնարերգութիւնները՝ ամէնէն զեղեցիկ մասը կը կազմեն իր գործին. այդ սակաւաթիւ կտորներու մէջ կան ալ որ ժամանակին սովորութեան արձագանք են՝ երգելու հայրենիքը եւ յօրինելու պարագայական տողեր. այսպէս են Խրիմեան Հայրիկի նուիրուածները, հայրենիքի աւերը երգող չնչին բանաստեղծութիւնները՝ ինչպէս Վիշտի հայուն, Նոր սեւ օրեր. թերեւս անոնց մէջ ամէնէն յաջողն է Իդա առ Հայաստան, որ ունի ներշնչում եւ զողորմիկ արտայայտութիւն:

Դուրեան կը յայտնուի ա'յն ատեն իսկապէս ներշնչուած բանաստեղծ՝ երբ իր սիրտը կը բանայ. քնարերգութիւնն ար-

դէն սրտի երգ է, մանաւանդ ռոմանտիկ զպրոցի ըմբռնումով. եւ Դուրեան ռոմանտիկ է ամէն բանէ առաջ: Իր երգին նիւթը կը կազմեն բնութիւնը եւ իր անձը: Բնութիւնը իր երգին մէջ, սակայն, միայն անուղղակի կերպով կը մտնէ. չկայ իր քով գործիչ ու պաշտամունքը բնութեան, որուն ծոցն ինչայ, խորասուզուի ու խորհրդածէ, ինչպէս կը գտնենք ուրիշ ռոմանտիկ բանաստեղծներու մօտ. Դուրեան այդ երգերը յօրինելու ժամանակ իսկ չունեցաւ, որովհետեւ հոգեկան ուրիշ ապրումներ զերակնեցին իր վրայ: Բայց ըսել չէ թէ ան չի սիրեր բնութիւնը, որուն ամէնէն զեղեցիկ տեսարաններովը աչքը լեցուն է՝ ապրած ըլլալով Պոլսոյ պէս եզական զեղեցիկութիւններով օժտուած քաղաքի մը մէջ, ինքը որ Վոսիտրի եւ երկնքի հայելադիպ կապոյտներու միջեւ շնչած է, եւ արեւմուտքի վառ դոյններով զմայլած, որոնց տպաւորութիւններուն կը պարտի իր սիրուն մտապատկերները:

Դուրեան իր հոգեկան տխուր ապրումներուն եւ հիւանդոտ զգայնութեան մը ուժգին տպաւորութեան տակ՝ գրաւուած է բոլորովին սիրոյ եւ մահուան ազդեցութեամբ, որ կը տառապեցնեն, կը ցնցեն եւ կը մաշեն իր էութիւնը: Իր երգին տիրական զիծերն են հետեւաբար սիրոյ պատրանքին եւ մօտալուտ մահուան կողմնորոշ դաւարումները, որոնցմէ կը տարուի ինքնաբերաբար՝ ինչպէս թօշնած տերեւը հովէն: Սիրային երգերը ամօթխած եւ երկնոտ հոգիի մը տրոփումներն են, եւ կը նմանին անըջային տեսիլքներու, եթերային ու մաքուր, բայց ոչ տարտամ եւ ընդհանուր՝ առանց իրական հիմի մը, որովհետեւ խորապէս զգացուած են անոնք եւ անձնական, թէեւ դադապարային մթնոլորտի մէջ մնացած միշտ: Բոլորովին ուղիղ չէ ըսելը հետեւաբար՝ թէ իր սիրոյ երգին ետեւ չկայ իրական անձ մը, դէպք մը, դէմք մը, եւ թէ իր երգերը անգի-

տակից թրթռացումներ են անտրոն երկտասարդի մը. անշուշտ փորձած չէ իրականին տափակութիւնը եւ ոչ ճաշակած անոր դառնութիւնը, սակայն զգացած է իրականին շունչը որ կեանքէն կու գայ, որ մերթ կարօտի եւ զմայլանքի պահեր պատճառած է (տես Զնէ պաշտեմ, Հրծծիւնի, Սիրել, Մանիշակ, Իցիլ Բէ, Սիրեցի Բեզ կտորները), մերթ տարած մատնած է զինքը յուսախաբութիւններու տանջող ցաւին կա'մ մահովը իր սիրածին (Պէտի Է մեռնիլ, Սեւ սեւ), եւ կամ գլործումով սպասուած սիրոյն (տես Դրժել, Առ կոյսն): Սիրային կտորներու մէջ ամէնէն դադապարայինը Թրքուիսին է, ուր սիրոյ երգը կը դժադրուի այնքան նըրբօրէն:

Մահերգութիւնը երկրորդ զլիաւոր լարն է Դուրեանի քնարին: Հոս ցաւի շեշտը կը սաստկանայ եւ իր երգերը կը դառնան ալիկոծումներ, հոգեկան ընդգլխումներ, հետզհետէ աւելի ուժգին արտայայտուած իր Ի՞նչ կ'ըսեն, Իմ մահը, Յուշ, Լնակը երգերուն մէջ, որ իր ըմբոստացումն են մահուան իրականութեան առջեւ: Կեանքի անհուն տենչը կը բարբախէ այդ տողերուն մէջ, ուր կը թախանձէ աստղերէն «կրակէ մի կաթիլ» կենդանանալու, ապրելու եւ սիրելու համար. անողորմ է սակայն մահը, խրած է իր թաթերը անոր կողին մէջ. բանաստեղծը կը դաւարուի իր բովանդակ էութեամբ, կը բողոքէ, ու այդ իր յուսակտուր երգը կը դառնայ ամէնէն ուժգին արտայայտուած մահամերձ բանաստեղծի մը ամէն ժամանակներու: Այդ վերջնական տոամէն առաջ, երբ ցաւը իր ահաւոր ուժգնութեան չէր հասած, Դուրեան կ'ողբերգէր իր թշուառութիւնը, իր աղքատութիւնը երեկոյեան բալն անաւորտ քերթուածով, ուր տառապանքի շեշտը աւելի մեղմ է, բանաստեղծութիւնը աւելի հանդարտ ու համակամ, բայց միշտ նոյն պայքարող հոգիի մը երգն է, հոգիի



մը՝ որուն ներսը երջանկութեան ճառագայթով մը զուարթացած է երբեք: Այս կարգի քերթուածներն իսկապէս եղբերակներ են՝ ելած սրտէ մը՝ որ ոչինչ վայելած է, որ երազած է առանց հասնելու, որ աշխարհ եկած է միայն իր մեռնիլն զգալու եւ մեռնելու:

Բանաստեղծը Դուրեանի մէջ ազդեցութիւններու արդիւնք է. ան ոչ գրեթե եւ ոչ ալ հեղինակներու հետ երբեք լրջօրէն չփոխ ունեցած է, վասնզի շատ միջակ ընթերցող մըն էր, որուն պատճառները մէկէ աւելի են. նախ ազդատութիւնը, անորոտի ետեւէն հեւ ի հեւ վաղելու մըտահոգութիւնը, Պոլսէն բնաւ դուրս ելած չըլլալու պարագան: Իր բոլոր ծանօթութիւնը կը սահմանափակուի ուսանողիկ բանաստեղծներէն Հիւսիսի «Էրնանի» ինչ որ կը յիշէ, Լամարթինի «Ռաֆայէլ»-ին՝ որուն մասին կը խօսի իր Թշուառներուն մէջ, եւ «Ժողով»-ի, որմէ թերեւս իր դաւադարական սիրոյ ըմբռնումը առած է վարդ եւ Շուշանի դործին համար: Քերթուածներուն մէջ՝ Ալֆրէտ տը Միւսէի «Յիշէ»-ին ազդեցութիւն մը կարելի է տեսնել դուցէ իր Յուլիին վրայ եւ բացատրութիւններ մը Հիւսիսէն եւ Լամարթինէն փոխ առնուած, ինչպէս «Ճիւղով շաղուած մի անդրի», «սրտի մեղու» ըսուած կոյսի համար. ուրիշ ոչինչ: Իր երգերը ի՞ր բնածին խառնուածքին, ի՞ր գերզգայնիկ յուզականութեան լոկ պտուղներն են, հարգատ ներշնչումներն իր հոգիին, բոլորովին ինքնատիպ՝ Դուրեանական ըսուելու չափ: Ան դիտող մը է կեանքին, իրերուն, դէպքերուն. իր բանաստեղծութիւնը յղացումի բանաստեղծութիւնը է, որ արուեստով եւ խորհրդածութեամբ մարմին կ'առնէ, այլ ինքնարուստ ժայթքումներ են միայն իր հոգիի թրթռացումներուն, աննշան հպումներէ իսկ դողդոջուն ու զերարզգած իր հոգիին: Եւ արդէն իր քով նկատելին՝ դադարաբէ կամ մտա-

ծութենէ աւելի զգացումն է, բուն ու ջերմ, որով իր երգերը կը դառնան հեղինակները՝ սիրող եւ տառապող անձի մը, որ իր ուժերուն օրէ օր սպառումին առջեւ ջղալրդիւ կը թախանձէ, կու լայ, կը պայքարի, ու այս պայքարէն ելած երգը շատ յուզիչ երգ մը կը դառնայ՝ որ ազդեցիկ է ստուգիլ: Դուրեանի քերթուածներն հետեւաբար լոկ արդիւնք են զգայնութեան մը, հզօր եւ տիրապետող՝ իմացական կարողութեան վրայ: Իր Տըրտուցիքն ալ, որ իր ամէնէն գեղեցիկ քերթուածն է, մտքի դործ է, այլ զգացումի, որ յորդուն եւ շառաչիտ կը պոթկայ իր հոգիին: Ընդհանուր մեկամաղձութենէն հետզհետէ դարգացած ի՞ր յռետեսութիւնն ալ չի մոռնար մտքի սահմաններէն ներս՝ փրկափայլական կերպարանք առնելու. շատ անգամ անձնական ալ չեն իր կրկնած մէկ քանի ըմբոստ դաւադարները, ինչպէս «Աստուծոյ ծաղրն է աշխարհ ալ արդէն», այլ փոխ առնուած բացատրութիւն մը, որուն հակառակը կը չեւոյէ զգաստութեան պահուն (տես վարդան Լուիսեանի նուիրուած դամբանականը): Հարկ է աւելցնել որ այս յոռետեսութիւնը, միւս կողմէն, տարաւ եւ յանդեցուց զինքը երջանիկ ու եղական ճամբով մը (հետեւանք իր խորապէս կրօնական դաստիարակութեան) մտքի լուսաւոր պարունակին, անմահութեան անհուն եւ անանց գեղեցկութիւններուն ծոցը, ուր կեանքն այլեւս երազ է, ուր չկայ պատրանք, փափաքիլ եւ չհասնիլ, ուր երջանկութիւնը անպղտոր է, եւ ուր վերջապէս չկայ հեղնանք իր ազդատութեան, ցաւին, դալկացած դէմքին՝ որ շարունակ կը դառնացնէ իր գոյութիւնը՝ այսպէս կը յայտնուի իր նամակներուն մէջ, (մանաւանդ իր վերջին նամակին մէջ, 1871. 10 Դեկտ.), որոնք՝ ինչպէս ըսինք՝ արձակ քնարերգութիւններ են: Պէտքիկ թաշկանի եւ Դուրեանի բանաստեղ-

ծութիւններուն խորքը նոյն է, երկուքն ալ կը հեծկլտան, կը տենչան ապրիլ ու յաւերժանալ, բայց արտայայտութեան եղանակը բոլորովին տարբեր է. մինչ առաջինը իր եղբերակութեանց մէջ հանդարտ, համակամ ու օծուն շունչ մ'ունի, երկրորդը՝ զայրոյթի, ընդվզումի եւ հոգեկան ահաւոր ամբոխումի երգիչն է, բողբոջ եւ բուն պայքարող:

Բնականութիւնը ամէնէն առինքնող յատկութիւնն է Դուրեանի ոճին. ան չունի արուեստագէտի տքնութիւն, յղիւմի աշխատանք չկայ իր քով, Դուրեանի արուեստը իր անարուեստ ըլլալն է. իր վերածակած կտորները ընդհանրապէս ոչ թէ սրբադրութիւններ են, այլ վերստին զգացուած ու նոր թափով մը կրկին դրուած երգեր են, այսպէս Սիրեցի քեզը («Մնացես բարեալ»-ի տեղ), Պէտք է մեռնիլ («Անան տեղոյն»-ի տեղ), եւ Իցիլ քե («Կը սիրեմ զքեզ»-ի տեղ): Դուրեան կը գրէր հապճեպով, արագ, ներշնչման պահուն. Թրքուիկն դրուած է օր. Պաղլար Պաշիի գերեզմանատան քով՝ ուսկից թրքուհիի մը կողքով անցնիլը տեսած է, Տրտուցիքը մահուն անկողնին մէջ, Թաւրոնը կամ Թշուառներ խաղը երկու շարթուան մէջ (1870-ի Դեկտ. 18-էն 1871-ի Յունուար 3-ը):

Իր քերթուածները իրենց կատարեալ կերպարանքը չառած էակներու կը նմանին արուեստի տեսակէտով. կը պակսի անոնց մէջ ոճի կատարելութիւնը, բացատրութեան ճշգրտութիւնը, տաղաչափական ներդաշնակութիւնը եւ անտղիւտ ձեւը, որ թերեւս ժամանակով եւ կեանքի ընձեռած զիւրութիւններով՝ ապագային պիտի ստացուէին, ու Դուրեան իր հարուստ զգայնութեան հնոցէն ձուլուած պիտի տար մեղի յղացումով ու ձեւով աւելի հասուն ու կատարեալ քերթուածներ: Սակայն ինչ ալ ըլլայ, իր քնարերգութիւնները, եւ մանաւանդ անոնց լաւագոյնները մեր զրականութեան ամէնէն

անձնական, ամէնէն զմայլելի երգերն են, որ սիրող եւ պայքարող հոգի մը երգած ըլլայ: Աստուծ իրենց այդ արտայայտութեան ձեւին մէջ ալ կը պարունակեն բացառիկ գեղեցկութիւններ՝ նկարչական գունազեղ պատկերներ, փոխաբերութիւններ՝ նոր ու գրաւիչ մերձեցումներով բառերու, որոնք մեր դասական հանգամանք կրող ուսմանդիկ բանաստեղծներու ոճին վրայ բոլորովին նորութիւններ կը բերէին, թարմ շունչ մտցնելով մեր զրականութեան ներս. գիւտաւոր են «ոյկէան մը տըրտունը», «անդունդ մ'հառալ», «բոյլ մը նայուածք», «փունջ մը ժպիտ», «զիշեր մը սուզ» պատկերաւոր բացատրութիւնները՝ որոնք չեն հետեւի ընդունուած աւանդական ձեւերուն, այլ ըսուած են ինչպէս որ իր հոգին եւ իր երեւակայութիւնը թելադրած են իրեն՝ բնական ու ինքնաբոլի: Իր Լեզուն ալ, զուտ աշխարհաբարի դործածութեան անդրանիկ ու յաջող փորձն է, ուր գրաբարի ծանրաբեռնող հետքեր չկան, ինչպէս Թերզեանի մօտ: Դուրեանն ալ սակայն, թէեւ գրաբարի հմուտ մը էր, բոլորովին ձերբազատուած էր գեռ անոր ազդեցութենէն, բայց կայ ճիղը չհեռանալու ժողովուրդէն, ըլլալու անկախ՝ ժամանակի գրական խիստ պահանջներէն: Դասական հայերէնի հանդէպ այս անփութութիւնն է որ իր լեզուին կու տայ ժողովրդական հայերէնի բնոյթ, հակառակ իր օրերու գրեթէ պարտադրիչ ուղղութեան: Դուրեան կը հարթէր այսպէս անձնադրոյժ ու ենթակայական բանաստեղծութեան ուղին, ներարկելով անոր մէջ նոր տրիւն եւ ջիղ՝ թէ՛ նկատմամբ նիւթերու ընտրութեան եւ թէ՛ լեզուի: Այս ժողովրդական, անկեղծ ու բնական բանաստեղծութեան հետեւողները պիտի ըլլան յետոյ Միայիլ, Մեծարենց, Տէրեան, Ա. Իսահակեան՝ իրենց ուրոյն նկարագրին համաձայն:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ